Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
G-58

XXXXXXII

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ԵՈՒԲԼԵՐՆ

ԼՕՔՄԱՆԻ ՓԷԻՄՐ

ՊԱՏԿԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանի
1903

891.99
Ե-58

891.99
Ե-58

19 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԱՆ ՆՈՒՐԱԼԵԱՆ

ԼՕՍՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ

ՊԱՏԿԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՄԱՅԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսէս Վարդանեանի
1903

Дозволено Цензурою. 18 Апрѣля 1903 г. Тифлисъ.

ՆՈՒԷՐ

Ի նշան համակրանաց

եւ ընկերական անկեղծ

սիրոյ

Գրիգոլիս Հրատարակիչ

ՏԻԳՐԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ՆՈՒՐԱԼԵԱՆՑԻՆ

Հեղինակից։

08.04.2013
28350-Ա.Հ.
28609
ՄԱՍՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՈՍ. ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Արմ.ՍՍՌ
Ա. Մասսինյան
11380-57

ԼՈԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ

Պատկեր

I

աղուց էր, որ N... գիւղում մի մեծ նորութիւն չէր պատահել։ Գիւղական նոյն կեանքը, ամենօրեայ դաշտային և տնային աշխատանքները, երեկոները եկեղեցի գնալ, ֆալչիները, հէքիմները և այլն և այլն... Բայց վերջերս մի բարեպաշտ կին երազում տեսել էր, որ իբր թէ գիւղի սուրբը շուտով մի մեծ բարիք է ուղարկելու իր հովանաւորած գիւղին։ Հ'անցաւ միքանի օր և, կարծես, կատարուեց այդ երազը։

Մի երեկոյ գիւղ մտաւ մի օտարական և իջևանեց տէրտէրի տանը։ Նա յայտնեց տէրտէրին իր «Լոխմանի հէքիմ» լինելը և խնդրեց առայժմ գաղտնիք պահել, որպէսզի միքանի օր հաղստանայ՝ ուրիշ գիւղերում երկար աշխատանքից յետոյ։

—Լաւ հէքիմներ կան այս գիւղում, հարցրեց նորեկ «լօխմանը» մի երեկոյ խօսակցութեան ժամանակ տէրտէրին ու կնոջը։

—Կան, միքանի լաւ հէքիմներ ունենք, բայց թէ ամեն բանի դեղ չեն կարողանում անել, պատասխանեց տէրտէրը։

—Հա, հա, ճիշտ է, եղբայր ջան, հէքիմներ ու թրլսում անողներ շատ ունենք, բայց մի մեծ ցաւ կայ, որին դարման չեն կարողանում գտնել, վրայ բերեց իրիցկինը խորհրդաւոր հոգւոցով։

—Ի՞նչ ցաւ է դա, աւելի հետաքրքրութեամբ հարցրեց «լօխմանը»։

—Զբերութեան դեղ չը գիտեն, պարզեց տէրտէրը։

«Լօխմանի հէքիմը» մի րոպէ լռեց ու մտածմունքների մէջ ընկաւ։ Նրա ճակատին փայլեց մի տեսակ ուրախութիւն, կարծես, նա փնտրում էր մի բան և գտաւ։

—Շատ կան չբեր կնիկներ, հարցրեց նա։

—Կան, շատ կան, պատասխանեց իրիցկինը,—կարծես, Աստուած մեր գիւղը պատժել է մեզ անզաւակ թողնելով։

—Այստեղի հէքիմները չեն կարողանում դեղ անել։

—Չէ, չէ, եղբայր, ոչ մէկը, հեղնական և յուսակտուր ժպտաց իրիցկինը։

Այսպիսի հարցերի մասին մինչև կէս գիշեր խօսեցին նրանք ու քնեցին։ Հետևեալ օրը «լօխ-

մանի հէքիմը յայտնեց, որ ինքը մասնագէտ է «չբեր կանանց» ծննդաբերելում, նրանց յղիացնելում։

Տէրտէրը մատը կծեց, յիշելով այն երազը, և անչափ ուրախացաւ այդ անակնկալ և ցանկալի հիւրի գալուստին, քանի որ իր կինը ամուլ էր, և արդէն ծերացել էին նրանք ու ոչ մի ժառանգ չ'ունէին։ Նա մտածեց, որ աւելի լաւ է ուշ իմաց տալ գիւղին այդ հէքիմի մասին, որպէսզի «լօխմանը» հանգիստ կերպով և ուշադրութեամբ իր կնոջը պտղաբերելու դեղ անէ։

Տէրտէրի մեծ օդան յատկացրած էր հէքիմին, որտեղ նա զբաղւում էր իր հէքիմական գործերով։ Ամբողջ օրը տէրտէրն ու կինը չէին հեռանում «լօխմանի հէքիմի» մօտից, նրանք զբրցում էին այլ և այլ նիւթերի մասին։ Հէքիմը պատմում էր իր բժշկական հմտութեանց մասին, իսկ նրանք զմայլում և հիանում էին նրա շնորքի վրայ։ Ապա հէքիմը հարց ու փորձ էր անում գիւղի մասին, նրա մէջ գտնուող հէքիմների, փալչիների մասին, և աւելի ևս տեղեկանում էր, թէ ինչ կանայք կան ամուլներ։ Տէրտէրակինը, որ քաջ ծանօթ էր բոլոր գիւղացիների հետ, գիտէր նրանց ընտանեկան դրութեանց մասին, միամտութեամբ մանրամասն յայտնում էր չբեր կանանց անունները, տեղը և այլ տեղեկութիւնները։

«Արդէն ժամանակ է գործ սկսելու, մտա-

ծեց մի օր «լոխմանի հէքիմը», արդէն բաւականին տեղեկութիւններ ունիմ այցելուներիս մասին»։

Գալուց չորս օր յետոյ նա յայտնեց տանտիրոջը, որ վաղուանից ընդունելու է չբեր կանանց։ Երեկոյեան վճռեցին մեծ օդան ընդունարան դարձնել, իսկ նրան կից փոքրիկ քիլարը (մառան) հէքիմի առանձնասենեակը։

Իրիցկինը շալը գլխին դցեց և գնաց իր գիտցած միքանի չբեր հարսների տուն յայտնելու «լոխմանի հէքիմի» գալու և նրա ընդունելութեան մասին։

Կայծակի արագութեամբ տարածուեց այդ լուրը ամբողջ գիւղի մէջ։ Արդէն չորս օր է, որ նրանք տեսել էին տէրտէրանց տանը մի անծանօթ հիւր, և իրիցկինը հաւատացրել էր նրանց, որ նա մի ճանապարհորդ է,—ուրիշ ոչինչ։ Բայց այժմ նրանք լսելով նրա հէքիմ լինելը, դատապարտեցին իրիցկնկան, անուանելով նրան նախանձոտ, որ այս չորս օրուայ ընթացքում ոչինչ չէր յայտնել, և ենթադրում էին, որ հէքիմը միայն իրիցկնկան դեղ անելով էր զբաղուած ..։

Սկզբում գիւղացիները կասկածանքով վերաբերուեցին այդ բանին, մտածելով, որ մի գուցէ խաբերայի մէկը լինի այդ օտարականը։ Նրանց կասկածին գարկ էին տալիս գիւղի փալչիներն ու հէքիմները, որոնք ատամները կրճատացնելով նորեկի գալստեան վրայ, նուաստացնում

էին նրան ժողովրդի առաջ, ասելով, որ նա խաբերայ է։

Առաջին օրերը այցելեցին «լոխմանի հէքիմին» միքանի հասակաւոր կանայք, որոնք՝ գաւակ ունենալուց արդէն յոյսները կտրած՝ վերջին փորձը փորձեցին նոր հէքիմին դիմելով։

Մի գիշեր վերոյիշեալ կինը, կրկին երազ տեսաւ, որ իբր թէ գիւղի սուրբը նորից երևեցաւ նրան ու ասաց, որ այդ լոխմանի հէքիմին ինքն է ուղարկել, ով խելք ունի, թող օգտուի։

Այդ երազը տէրտէրը հետևեալ օրը եկեղեցում յայտնեց ժողովրդին և հաւատացրեց, որ իր հիւր «լոխմանի հէքիմը» իսկական հէքիմ է, թող գան կանայք դեղ ընդունելու. ասաց, որ իր կնկան էլ շարունակ դեղ է անում։

Ժողովուրդը հաւատաց, մանաւանդ որ արդէն այցելած կանայք պատմել էին միւսներին, որ հէքիմը շատ խելօք, հասկացող մարդ է երևում, որ շատ քաղաքավարի ու բարի է։

Այնուհետև հէքիմի գործունէութիւնը մեծացաւ. բացուեց փողի աղբիւրը։

Տղամարդիկ իրաւունք տուին կանանց, որ գնան հէքիմի մօտ։

Առաւօտեան բարիլուսից՝ դեռ արևը չծագած, չբեր հարսները կեսուրների հետ, ոմանք առանց կեսուրի, շտապում էին «լոխմանի հէքիմի» մօտ, որից միայն սպասում էին օգնութիւն։ Աւելի շատ ուրախացան ամուլ երիտասարդ

ները, որոնք ունէին «գէշ կեսուրներ»։ Գիւղում կարծիք կայ, որ երբ հարսը չէ ծննդաբերում, մեղաւորը ինքը՝ կինն է, և կեսուրը նայում էր նրա վրայ խեթ աչքով ու զզուելով։ Ահա այսպիսիները աւելի ուրախացան և գիշեր-ցերեկ աղօթք անելով, խունկ ու մոմ վառելով Աստծուն, և խնդրելով, որ այս «լօխմանի հէքիմի» ձեռքով օգնուլթեան հասնէ իրանց՝ զաւակ պարգևէ, ապա շտապում էին «լօխմանի» մօտ։

Անցաւ մօտ երկու շաբաթ. վերջին օրերը աւելի մեծ բազմութիւն էր գալիս նրա մօտ,— ոմանք ներքին հիւանդութիւնների համար, ոմանք վէրքերի համար և մեծ մասամբ չբերներ՝ ծնընդաբերութեան դեղ անելու։ Արդէն ամբողջ գիւղը գիտէր, և դեռ շատերը կային այցելելու հէքիմին։

II

—Բարի լուս, Նոյեմզար, մանչ ես, թէ աղջիկ, այս խօսքերով մտաւ ներս դրկիցի հարս Հերիքնազը և ուրախ-ուրախ մօտ վազեց Նոյեմզարին, որ տնտեսական գործերով էր զբաղուած։

—Բարով եկար, Հերիքնազ, ինչ կայ, ինչու ես ուրախացել, հարցրեց Նոյեմզարը խորհրդաւոր ժպիտով։

—Իրը թէ չը գիտես ոչինչ։

—Գիտեմ, բայց ինչ օգուտ։

—Լաւ, լաւ, էդպէս մի խօսի, աղջի, բաս դու չես գնալու հէքիմի մօտ։ Դու չը գնաս, կեսուրդ կը տանի։

—Դու արդէն գնացիր, Հերիքնազ, հարցրեց Նոյեմզարը, թողնելով գործը և նրա հետ նստելով տախտին։

—Չէ, ես էդուց պիտի գնամ, էսօր մարդս իրաւունք տուեց, ու վոդ էլ տուեց, որ գնամ։ Աղջի, յանկարծ գլուխ խեղդած կեսուրդ տուն չը մտնի, էն ուր էր գնում գնձգնձալէն։

—Գնաց «լօխմանի հէքիմի» մօտ, որ խօսի ինձ համար։

—Ըհը՞, լաւ է, բաս ես ու դու միասին գնանք, ուրախացաւ Հերիքնազը,—գիտես, հոգիս, շատ են գովում նրան։

—Որ լաւ դեղ է անում, ընդհատեց Նոյեմզարը։

—Հա, հա, Նոյեմզար, գնացողներից շատերին հարցրի, լաւ տեղեկացայ հէքիմի մասին, բոլորն էլ գովում են, ասում են, որ խաբեբայ չէ։

—Ջէհէլ մարդ է, հարցրեց Նոյեմզարը։

—Չէ, քա, էն օրը ես էլ ժամում տեսայ նրան տէրտէրի հետ խօսելիս, մեծ մարդ է, 40—50 տարեկան կը լինի, մազերն արդէն ճերմակել են, ասում են, որ շատ ճշմարտախօս

ու բարի մարդ է։ Տէյհա՜, էն չոլախ Նուշօից ոչ մի կոպէկ չի վերցրել դեղի փող, բախշել է, էն չաղ Մարիամից էլ տուածի կէսն է վերցրել. էն չոռոտ Ալմաստին էլ մէկ տեսնելով, ասել է, որ զուր է դեղ անելը, նա ոչ մի զաւակ չի ունենայ, էլ էլ, մի խօսքով իսկ որ «լոխմանի հէքիմ». հա, աղչի, ասում են, որ էն աղրբի քովը կեցող քահլանենց հարսն էլ արդէն զգացել է իրան ուրիշ տեսակ, ծանր...

—Փառք քեզ, Աստուած, այդ լսելուց յետոյ ձեռները փարեց և բացականչեց Նոյեմզարը, վեր նայելով,—վերջապէս ուղարկեցիր քու ողորմութիւնը։ Հիմի կ'ազատուիմ գէշ կեսրոջս տուրտուրոցից ու անէծքներից, էլ չեմ լինի նրա աչքի գրողը։

—Գրողը տանի նրան, յարեց Հերիքնազը,—թող էնքան անիծէ, որ ինքն էլ բեզրի, էն անէծքը իրան դայ։

—Է՜հ, Հերիքնազ գիտես էլի՛, թէ ինչ օրումն եմ նրա ձեռքում. նա իմ Սաթայէլս է դաւել։ Ասում է, թէ ես մեղաւոր հօր որդի եմ, որ չեմ ծնում, որ իրանց օջախը ես մարելու եմ, էլ էլ ինչ ասեմ, մի խօսքով հալւում եմ ու մաշւում...։

Միքանի կաթիլ արտասուքներ դուրս ցայտեցին Նոյեմզարի կեղտոտիլ աչքերից և գլորուեցին նրա կարմիր այտերի վրայով։

—Ինչ պսակուել եմ, դժոխքն եմ ընկել,

շարունակեց դանդատուիլ Նոյեմզարը հեկեկալով,—կերած հացը քթիցս է գալիս, էնքան արեց էն անհոգի կեսուրս, որ մարդուս աչքիցն էլ գցեց ինձ, նա էլ է ինձ թքում, մրում, ուշունց տալիս, ասես Աստուած, եարաբ...

—Լաւ, դու էլ ինչ սկսեցիր էրէխի պէս լալ, դէ հիմի կը գնանք «լոխմանի հէքիմի» մօտ, նա դեղ կանի, պրծաւ գնաց, հանգստացեց նրան Հերիքնազը։ Աղչի, ճիշտն ասա, աղչիկ ես ուզում ունենալ, թէ տղայ, հարցրեց նա ծիծաղելես։

—Է՜հ, բան ասեցիր. ինչ որ Աստուած կը կամենայ, պատասխանեց Նոյեմզարը, դէյրայի փէշերը բարձրացնելով և սրբելով աչքերը։

Բաւական երկար նրանք խօսեցին իրար հետ և մխիթարեցին միմեանց։

Նոյեմզարը չորս տարուայ պսակած հարս էր, նրա մարդն էր Ցովակենց Գալուստը, որ մի հիւանդոտ, թուլակազմ և ցածրահասակ մարդ էր։ Նա պարապում էր դաշտային աշխատանքներով։ Գալուստի մայրը,—Նոյեմզարի կեսուրը, ամբողջ գիւղին յայտնի Հռոմ խանումն էր, որ յայտնի էր իր խիստ բնաւորութեամբ, բամբասէր ու ինքնահաւան բարք ու վարքով։ Բոլորն ափսոսում էին Նոյեմզարին, որ նրա նման մի կեսուրի ձեռք էր ընկել, որ տասնաւոր փեսացուներից «չիստկա Գալն» էր արժանացել նրա մարդը լինելու։ Անչափ գեղեցիկ էր Նոյեմ-

զարը։ Գիւղական պարզ կեանքի մէջ մեծացած և գիւղի մաքուր օդ ու ջրով սնուած առողջակազմ ու վարթամ գեղջկուհի էր Նոյեմզարը։ Նրա պարարտ՝ գիւղացուն վայել կոպիտ կազմուածքը, նրա գեղեցիկ երկայն մազերը, ալկարմիր լեքը թշերը, խիտ սև ունքերը և հմայիչ արտայայտութիւնը դարձնում էին նրան գիւղական գեղեցկուհի, որի նմաններին ծնում է միայն գիւղի բնութիւնն ու մթնոլորտը։ Նրա կեսուրը՝ Հոռոմ խանումը՝ սաստիկ չար և սնահաւատ պառաւ էր. Նրա ծնած որդոցից մնացել էր միայն Գալոն և նա ցանկանում էր, որ նրանից ունենայ թոռ, թոռի թոռ, և այդպիսով իրանց ցեղը բազմանայ։ Բայց Նոյեմզարը չէր ծննդաբերում։ Թէ Նոյեմզարի ամուլ լինելն էր պատճառ այդ բանի, թէ «չխօտկա Գալօի» հիւանդութիւնը, այդ միևնոյն էր Հոռոմ խանումի համար։ Նրա հաշուելով, որդի ծնելը Նոյեմզարի գործն էր, նա պիտի ծնէր և ոչ թէ Գալոն, ուստի մեղադրում էր և անիծում հարսին, անզաւակ լինելու համար։

Եւ միայն Հոռոմ խանումը չէր այդ կարծիքի տէր կին. ոչ թէ այդ գիւղում, այլ և ուրիշ գիւղերում նման դէպքերում միշտ կեսուրները մեղադրում են ամուլ հարսներին և տանջում նրանց իրանց հակակրանքով։

Հերիքնազը բախտաւոր էր, համեմատաբար Նոյեմզարի հետ։ Նա չ՝ունէր կեսուր, այլ ունէր

ծերացած, անկողին ընկած սկեսայր, որ էսօրէգուցն էր ընկել։ Նրանց ընտանիքը շատ մեծ էր։ Նա ունէր երեք տեքերկին, որոնք ունէին զաւակներ, իսկ ինքը, որ միջակ տեքերկինն էր, բացառութիւն էր կազմում։ Բայց նրա վրայ խօսող չը կար, նրան նախատող չը կար չբերութեան համար։ Միայն իր մարդն երբեմն երբեմն խօսում էր, և այն էլ ոչ խիստ։

Նոյեմզարն ու Հերիքնազը շատ էին սիրում իրար։ Նրանք, իբրև մօտ դրկիցներ, միշտ ազատ և յարմար ժամերին տեսնուում էին, զրցում, յայտնում միմեանց գաղտնիքներն ու վշտերը, և իրար սփոփում։ Ահա այսօր էլ Հերիքնազը, տեսնելով, որ Հոռում խանումը գնում էր ուրիշ տեղ, չտապեց Նոյեմզարին ուրախացնելու։

—Աղչի, զու տես, որ էդ հէքիմի դեղով ծնած էրէխէքը բոլորն էլ թօփալ լինեն, կատակախօսեց Հերիքնազը և սկսեց բարձրաձայն ծիծաղել։

Նոյեմզարն էլ չը զսպեց իր ծիծաղը։

—Ի՞նչ կը խնդաք լվրթուելէն-լկտօրէն, լսուեց Հոռում խանումի սարսեցնող ձայնը, որն արդէն վերադարձել էր հէքիմի մօտից և այժմ ներս էր մտնում տուն։

—Մեղայ Աստծոյ, ո՞վ է իմացել, որ հարսներն էդպէս բարձր ձէնով ծիծաղեն, հիմի որ մի տղամարդ անցնի դռնով և լսէ ձեր ձէնը, ինչ կ՝ասէ. էստեղ չէի, հա, «կեսուրս մեռաւ, տե-

ղրս լինցաւ», հա՛, շարունակեց նկատողութիւն անել Հռոմ խանումը աւելի վրդովուելով, մերթ իր հարսին, մերթ դրկիցի հարսին նայելով։

Նոյեմզարն ու Հերիքնազը ամօթից ու երկիւղից քարացած՝ անշարժ մնացին։ Նրանք բերանների փաթաթանը աւելի վեր բարձրացրին ու կարմրատակած՝ գլուխները խոնարհած, լուռ մնացին։

Հերիքնազն աւելի ևս կարմրեց և զղջաց իր դալը, քանի որ ինքը պատճառ եղաւ անբաղդ Նոյեմզարին այսպիսի խիստ նկատողութիւն ստանալու։ Նա պատրաստ էր այդ րոպէին բերանի փաթթոցը յետ քաշել, քակել դարևոր աւանդական հարսնական անխօս լինելու փականը և ընդդիմախօսել Հռոմ խանումին, որ մեղաւորն ինքն է՝ Հերիքնազը, նա՛ եկաւ Նոյեմզարի մօտ, նա ծիծաղելու նիւթ ասաց, որ և սկսեցին ծիծաղել։ Բայց գիւղական կանայի ստրկական հնազանդութիւնը թոյլ չը տուեց Հերիքնազին այդ անելու։ Նա միայն խոնարհ գլուխ տուեց և կանգնած մնաց մի տեղում։

—Արի ծածկոցս վերցրու վրայից, հրամայեց կեսուրը հարսին։

Նոյեմզարը մօտ վազեց ու վերցրեց ծածկոցը. Հռոմ խանումը բարձրացաւ տախտին, նստեց մինդարի վրայ ու սկսեց Հերիքնազին հարց ու փորձ անել նրանց ընտանեկան դրութեան, ամուսնու գործերի և ուրիշ բաների մասին։ Իսկ

Հերիքնազը կանգնած նոյն տեղում՝ նրա հարցերին պատասխանում էր գլխի և ձեռների շարժումներով։

Փորը ինչ յետոյ Հերիքնազը գնաց իրանց տուն։

—Տեսայ հէքիմին, խօսեցի, ասաց Հռոմ խանումը Նոյեմզարին,—էս էրկու օրս փող առնեմ Գալօիցս ու տանիմ քեզ նրա մօտ։ Լաւ մարդ է էրևում, հասակաւոր մարդ է, իրիցկինն ու տէրտէրն էլ շատ գովում են նրա շնորքը...

III

Գիւղական հրաշալի առաւօտ է։ Պայծառ արևը հորիզոնից բաւականին բարձրացել է և ճեմում է առաջ անամպ երկնակամարի վրայով, սար ու ձոր, դաշտ ու արտ իր կենդանացուցիչ ճառագայթները թափելով։ Նախիրը վաղուց սարը՝ն է բարձրացել. տղամարդիկ արդէն իրանց դաշտային աշխատանքներումն են գտնուում։ Երիտասարդ հարսներն ու աղջիկները դուրս են եկել հանդը բանջարեղէն քաղելու. ոմանք էլ կուժերն ուսերին ձորակի գլգլան սառն աղբիւրից ջուր են կրում...

Տէրտէրանց տան մեծ օդայում «լօխմանի հէքիմը» յետ ու առաջ էր քայլում, մտածմունքներով շրջապատուած։ Տէրտէրը տանը չէր, նրան

ZUUG-Арм.ССР

միւս գիւղից հրաւիրել էին ննջեցեալի վրայ։ Կից օդայում սպասում էին միքանի կանայք հէքիմին ներկայանալու համար։

«Լօխմանի հէքիմը» ծագումով գիւղացի էր. նրա հայրն էլ եղել էր արհեստով հէքիմ և սա իր հօրից մնացած հէքիմարանովը շարունակեց այդ արդիւնաւոր պաշտօնը,—հէքիմութիւնը։ Նա միքանի տարին մի անգամ շրջում էր մի որ և իցէ գաւառի գիւղերը և հէքիմութիւն անում։ Բայց առաւելապէս ինչ մասնագիտութիւն ունէր նա, այդ ինքն էլ չը գիտէր։ Նա բժշկում էր ամէն ինչ... Նա միայն փորձուած ու հեռատես մարդ էր։ Իր կեանքի 40—50 տարիների ընթացքում շրջել էր գիւղէ գիւղ և ըմբռնել գիւղացու ոգին։ Գնալով մի որ և իցէ գիւղ, նա նախ մնում էր այնտեղ միքանի օր անյայտ, տեղեկանում էր այդ գիւղի ներկայ ցաւի հետ և հետևեալ օրուանից յայտարարում իրան այդ ցաւի հէքիմ։ Այդպիսով նա դառնում էր ժամանակի ու հանգամանքների ծնունդ, և հետևաբար մեծ ընդունելութիւն գտնում գիւղի մէջ։ Նրա խորհրդաւոր դէմքը, արտայայտութիւնը, հագած տարազը և վարուեցողութեան եղանակը, շատ շուտ գիւղացիների կասկածանքները փարատում էին։

Հենց այս ճանապարհորդութիւնները նրան «լօխմանի հէքիմ» անունը վաստակեցին, և ահա գալով այս գիւղը նա իջևանեց տէրտէրի մօտ և միամիտ իրիցկնկանից հաւաքեց կարևոր գի-

տելիքները։ Հէքիմի բախտից այդ գիւղն էլ, կարծես, կանանց չբերութեամբ էր պատժուած Աստծու կողմից։ Հէքիմը մասնագէտ էր չբեր կանանց դեղ անելու...

«Լօխմանի հէքիմը» հագած ունէր հնամաշ, դեղնած սերթուկ, որ երևի տարիներ առաջ քաղաքում եղած ժամանակ էր գնել։ Սերթուկի կրծքին հաստ չերտով նստած էր կեղտուճենճ, որ հաւանականաբար կերակուր ուտելու ժամանակ էր թափուել. հին անդրավարտիկը անճոռնի, լայն ու կարճ, ոտներին հագած էր կարկատած կօշիկներ և մի մեծ կարմիր թաշկինակ էլ սերթուկի յետին գրպանումը։ Նրա մեծ ու դուրս ընկած աչքերը շատ խորհրդաւորութիւն ու խորամանկութիւն էին պարունակում իրանց մէջ, դէմքը դեղնած ու կնճիռներով ծածկած. սպիտակախառն բեղերը ղզղզուած, իսկ միրուքը տակից խուզած։

—Ոչինչ, լաւ է գործս. խօսեց «լօխմանի հէքիմը» ինքն իրան,—երանի թէ ամէն տեղ չբեր կանայք շատ լինին, գաղումս էլ շատ կը լինի։

Ցանկարծ դուռը բացուեց և ներս մտաւ իրիցկինը։

—Հէքիմ եղբայր, մի տղամարդ է եկել, ասում է, որ դու ես կանչել իրան։

—Թող դայ, տեսնիմ, ասաց հէքիմը և պատրաստուեց ընդունել։

Ներս մտաւ մի նիհար, բարձրահասակ դիւղացի, փափախը ձեռին, ու խոնարհ կերպով բարևեց։

—Հէքիմ աղա, դուն կնկաս ասել էիր, որ ես դամ։

—Ո՞ւր է կնիկդ, էն լղար-լղար սիրունատես հարսը, հարցրեց հէքիմը։

—Հրամանքէս, հէքիմ աղա։ Մի գրուստ ասա, պտի ունենամ որդի թէ չէ, ախը ինչի չի ծնում էն անիծածը, խաչիցն ա՞, ինչիցն ա՞, մի դեղ ա՛ն, հէքիմ աղա, ու ջափահախդ առ ինձնից։

—Է՜հ, աղպէր, ընկերաբար ժպտալով գլուխը տարուբերեց հէքիմը, ու աջ ձեռքը դնելով գիւղացու ուսին, ասաց —կնիկդ ասաց, որ դու քաղաքումն եղած ես, հէնց էտ քաղաքն ա քու բանը խալաբ արել. էնտեղ էնքան կեղտոտ կեանք ես անցկացրել, որ էլ հիմի քու կեանքիդ մէջ ոյժ չի մնացել գաւակ ստեղծելու... Ախը դնում էք քաղաք, էնդեղ հազար ու մի տեսակ մուռտռութիւններ էք անում, հիւանդանում, ու յետ գալիս ձեր խեղճ միամիտ կանանց եախիցը կպչում, թէ ինչի որդի չեն բերում, նրանց թքում էք, մրում, ծեծում, ախը խեղճ կնիկն ինչ անի, որ մեղաւորը դուք էք։ Ես տեսայ քու կնկան, քննեցի, նա կարող է որդի բերել, միայն թէ դու քեզ սուրբ պահիր. դա է քու մեծ դեղը։ Էրէկ չէ առաջի օրն էլ մի ջէհել հարս էր եկել,

տեսայ, որ շատ պտղաբերող է, համա չի բերում, հարց ու փորձ արի, իմացայ, որ մարդը շատ անխնայ ծեծում է, խփում մէջքին, փորին, արա նա էլ ոնց ծնի էրեխայ։ Նրան ինչ դեղ տամ։ Է՜հ, մի խօսքով քու կնկան դեղ չի հարկաւոր, դեղն էն կը լինի, որ դու քեզ լաւ պահես։

Գիւղացին լուռ լսում էր և հետզհետէ կարմրում ամօթից։ Ինչպէս հասկացաւ հէքիմը, որ նա վատ կեանք է վարել քաղաքում. մի՞թէ ամէն մի քաղաք գնացող գիւղացի վատ կեանք է վարում։ Ուրեմն, սա իսկական «լոխմանի հէքիմ է»։ Նա կրկին գլուխ տուեց, շնորհակալութիւն յայտնեց ու դուրս գնաց։

Դռան յետևից ականջ էին դնում մի երկու հոգի, հետաքրքրուելով, թէ ինչու էր եկել Ցովակենց Խէչօն հէքիմի մօտ։ Եւ համարեա թէ հէքիմի ասածները ամբողջովին լսեցին նրանք։ Ցովակենց Խեչօյի դուրս ելնելուց յետոյ, հէքիմը դուռը բացեց և ներս հրաւիրեց միւսներին։ Մտաւ մի կին, որի հագուստները հին էին և պատառոտած։ Նրա նիհար և դեղնած դէմքը ցոյց էր տալիս, որ նրա կազմուածքը մաշւում է մի կծող հիւանդութեամբ։ Հէքիմը դուռը ծածկեց ու մօտենալով նրան, հարցրեց գալու նպատակը։

—Ա՜խ, հէքիմ եղբայր, ինչի համար եմ ապրում աշխարհիս վրայ, ճակատագիրս շատ

դառն է։ Մարդ չ'ունեմ, մի տուն քիւլփաթի, էրեխէքի տէր եմ, ցամաք ուտելու հաց չունինք։ Էս ցաւն էլ, որ ջանս է ընկել, մաշում է ինձ, հալում է. ոչ ուտելս գիտեմ, ոչ խմելս։ Ամբ Աստուած սաղ ջան էլ է չի տուել, որ ծառայութիւն անեմ, ու մի թիքա հաց բերեմ, էրեխէքիս կերակրեմ։

Հէքիմը լուռ լսելուց յետոյ, հրամայեց նրան կուրծքը բաց անել։ Ապա սկսեց միքանի անգամ շօշափել ականջ դրեց և «ըհը՞» ասելով, որ իբր թէ հասկացաւ հիւանդութիւնը, հրամայեց ծածկել կուրծքը։ Ապա տախտի վրայ դրած կարմիր կապոցի միջից հանեց մի փաթեթ ինչ որ սպիտակ փոշի ու տալով նրան, պատուիրեց օրական մի անգամ ջրախառն քիչ քանակութեամբ ընդունել։ Միքանի հէքիմական խորհուրդներ էլ տալուց յետոյ, ճանապարհ ցոյց տուեց։ Կինը ծոցից հանեց մի հին եագլի, որի ծայրին հանգոյց կար և սկսեց քանդել հանգոյցը, որ հոդեպահաստ կոպէկներով վարձատրէ հէքիմին։ Բայց՝ «լոխմանի հէքիմը», նայելով նրա թշուառ արտաքինին, խղճաց նրան ու տուածի կէսը վերցրեց։

Այսպէս նա շարունակում էր անընդհատ ընդունել նկուղներին, մէկին դեղ տալով, միւսին խորհուրդներ տալով, երրորդի համար «թլսում» գրելով։ Եւ բոլորն էլ գոհ ու մեծ հաւատով հեռանում էին նրա մօտից։ Երբեմն նա վարձ չէր

վերցնում, կամ այն էլ շատ չնչին, ցոյց տալու համար ժողովրդին, որ իր նպատակը չէ նիւթական ձեռք բերել, և այդպիսով ժողովրդի հաւատը դէպի նա մեծանում էր հետզհետէ։ Բայց ընդհանրապէս նա չէր զլանում որքան կարելի է աւել յափշտակել մարդկանց։

Ահա զուգուած զարդարուած ներս մտան տէրտէրանց տուն Հռոմ խանումն ու իր հարս Նոյեմզարը։ Սա հագել էր իր ամենալաւ հագուստը, թագայ լաչաքը գլխին—մէջքի վրայով քարշ ձգել։ Շատ հարներ երանի տուին նրան գեղեցկութեան համար, շատերը նախանձեցին նրան, նրա հարուստ օջախի հարս լինելուն, շատ անցորական տղամարդիկ աչքի տակով նայեցին նրա վրայ ու «օխայ» անելով անցան, չը վստահանալով երկար նայել Նոյեմզարին, վախենալով խստասիրտ, ինչպէս իրանք անուանում էին «նուսուրաթ», Հռոմ խանումից։

Սրանք ներս մտան ու նստեցին օդայում, որտեղ ուրիշներն էլ կային։ Նոյեմզարի սիրտը թրպրտում էր թէ ամօթից և թէ ուրախութիւնից։ Նա ամաչում էր մի օտար մարդու ներկայանալ, որ գուցէ խօսէ իր հետ, նայէ այրական հայեացքով, շօշափէ մարմինը։ Բայց և ուրախ էր, որ այս «լոխմանի հէքիմը» պիտի ազատէ իրան՝ կեսրոջ ատելութիւնից ու տրտնջոցից։ որ պիտի որդի ծնէ, մայր դառնայ։ Նոյեմզարն այն աստիճանի զբաղուած էր իր մտքերով,

որ չը նկատեց դիմաց նստած Հերիքնազին, որի հետաքրքիր հայեացքն ընկաւ իր հայացքին վերջապէս նրանք տեսան իրար, բայց չէին կարող խօսել կեսրոջ և ուրիշների ներկայութեամբ, այլ միայն խորհրդաւոր հայեացք ձգեցին իրար վրայ, որով փոխադարձ յաջողութիւն մաղթեցին միմեանց։

Հէքիմը, որ ներսում մենակ էր և փողերն էր համարում ու լցնում էր իր կաշուէ փողապարկի մէջ, վերջապէս ներս կանչեց հետևեալին։ Անմիջապէս Հերիքնազը վեր ցատկեց տեղից ու ներս մտաւ։

Հէքիմը սկսեց հարց ու փորձ անել։ Ապա քննեց կուրծքը և փորը... Նա աշխատում էր հայեացքը չը ձգել Հերիքնազի հայեացքին, շատ չը նայել նրա մարմնին, ցոյց տալու համար, որ իրը թէ շատ լուրջ է և սառնարիւն։ Ապա տուեց Հերիքնազին ինչ որ չորացած արմատիք, պատուիրեց եփել ու ջուրը խմել։

Հերիքնազը շնորհակալութիւն յայտնելով տուեց նրան երեք ռուբլի։ Բայց հէքիմը չընդունեց, ասելով որ շատ քիչ է, որ «լոխմանի հէքիմի» համար այդ շատ չնչին վարձատրութիւն է։ Հերիքնազը երկու ռուբլի էլ աւելացրեց։

Սրանից յետոյ մտաւ մի տարիքաւոր ուրիշ կին, որ թէպէտ ծնել էր շատ երեխաներ, բայց ոչ մէկը տարուց աւել չէր ապրել, այլ մեռել էին և այժմ միայն մէկն էր մնացել, որի մեռնելուց և շատ վախենում էր։

Հէքիմն այդ բանը բացատրեց միմիայն

նրանով, որ այդ կնոջ պապի պապերը Եօթվէրքին մատաղ են խոստացել ու չեն կատարել խոստումը։ Հրամայեց տարին մի անգամ գնալ Եօթվէրքի դուռը, ջերմեռանդ հաւատով մատաղ անել և աղօթել, այնուհետև որդիքը կ'ապրին։

Սրանից վերցրեց երկու ռուբլի։

Վերջապէս մտան Հռոմն ու Նոյեմզարը։

—Հէքիմ եղբայր, ահա իմ հարսս, ասաց Հռոմ խանումը, ցոյց տալով Նոյեմզարին,—դէ՛հ, կը խնդրեմ, որ քու ամբողջ շնորհդ թափես, լաւ դեղ տաս, որ մի լաւ սիրուն իկ մանչ ունենայ։

—Լաւ, շատ լաւ, մայրիկ, խօսեց հէքիմը պլատոնական սառնութեամբ, բոլորովին չը նայելով Նոյեմզարի վրայ։

—Կարելի՞ է այստեղ մնամ, թէ՞ դուրս ելնեմ, հարցրեց Հռոմ խանումը, մօտենալով տախտին՝ նստելու և ապա յետ դարձաւ։

Հէքիմը մի ոսկէ շփոթուեց, և մի վայրկենական հայեացք ձգելով անշարժ կանգնած գեղեցիկ Նոյեմզարի վրայ, պատասխանեց.

—Դու դուրս ելնես, աւելի լաւ է, մայրիկ, միամիտ եղիր։

—Լաւ, լաւ, բայց ը՞ը, հէքիմ եղբայր, առաջուց բաղար անելը լաւ է, ասա, տեսնեմ, ինչքա՞ն է ջափահախդ։

—Տաս ռուբլի, ասաց հէքիմը լուրջ արտայայտութեամբ։

—Էհ, շատ շատ է տաս ռուբլի, կատակո-

ըէն ժպտաց Հռոում խանումը,—արի, մի բան պակսեցրու. վեց մանէթ կ'ուտամ։

—Շեմ հակառակի, մայրիկ, թող քու խօսքդ էղնի, ես փողի այնքան էլ ակնկալութիւն չունիմ։ Դէ, տուր։

—Հիմի պէտք է տամ, դեռ դեղն արա, տեսնինք, յարեց Հռոում խանումը։

—Այդպէս է, մայրիկ, փողն առաջուց եմ վերցնում, յետոյ գործն սկսում։

—Դէ լաւ, առ, եղբայր, բայց խղճմտանքով գործ արա։

Ապա հանեց նա գուլպայի գրպանից թաշկինակում կապած փողը, վեց ռուբլի տուեց հէքիմին, ու կրկին խնդրելով, որ լաւ աշխատէ, դիմեց միւս սենեակ։

—Անհոգ կաց, մայրիկ, ես գիտեմ իմ գործը... ասաց «լօխմանը» դուռը փակելով նրա յետեւից։

Մինչ այդ, Նոյեմզարը լուռ, որպէս արձան, կանգնած էր և աչքերը դեռին յառած լսում էր այդ խօսակցութիւնը, այդ առուտուրը։ Նա ներս մտնելով սոյն օտարականի մօտ, սկզբում ամաչեց և կարմրութիւնը դուրս ցայտեց նրա առանց այն էլ կարմիր այտերի վրայ, տարածուելով մինչև ականջները և աւելի գեղեցկացնելով Նոյեմզարին։ Նա մտքում անիծում էր իր ծնուած օրը, իր հարս գնալը, իրը բախտաւորուիլը։ Անիծում էր իր ճակատագրողին, որ սահմանել էր նրան ամուլ մնալ, որդի չը ծնել և անգութ

Հռոում կեսրոջ բարկութեան ու ատելութեան առարկան դառնալ։ Դեղն ու դարմանը, թլսումն ու աղօթքը ոչ մի հետևանք չ'ունեցան խեղճ Նոյեմզարի համար, և ահա վերջին յոյսը մնացել է այս օտարականը, որ «լօխման» է. եթէ չբերութեան դէմ դեղ, ճար կայ, միայն այս «լօխմանի հէքիմը» կը գիտենայ, ուրիշ ոչ ոք։

Նա աչքերը բարձրացրեց, նայեց հէքիմին, տեսնելու նրա արտայայտութիւնը և եզրակացնելու, թէ փայլում է արդեօք նրա ճակատին լօխմանութեան շնորհը։ Նա ուզում էր խախտել գիւղական աւանդական սովորութիւնը—չը-խօսկանութիւնը և իր լեզուով—իր սեպհական բերանով աղերսել հէքիմին, որ ամեն միջոց գործ դնէ՝ յղիացնելու համար։

Բայց մի կաչկանդող ոյժ զսպում էր նրան։ Նա լուռ և աւելի վատահօրէն նայում էր հէքիմին և սպասում նրա գործողութիւններին։

Հէքիմը փողը դնելով գրպանը, մօտեցաւ Նոյեմզարին։ Այժմ նա համարձակ նայեց Նոյեմզարին ոտից ց'գլուխ, դիտեց նրա գեղեցիկ դէմքը։ Նոյեմզարի գեղեցկութիւնը գիւթեց լօխմանին և տարփանքը շարժեց։ «Ո՜րքան գեղեցիկ է, արժէ ճաշակել...» մտածեց հէքիմը։

Նա հետզհետէ գրգռուելով, կորցրեց գիտակցական գործողութիւնները։ Սերթ տախտի վրայ դրած իր «հէքիմարանն» էր ձեռք առնում, թերթում յետ ու առաջ, մերթ, «հէքիմարանը»

վայը դնելով, տախտին դարսած դեղոբայրն էր խառնում։

Նա կրկին նայեց Նոյեմզարին, որ արդէն բերանի փաթաթանը յետ էր քաշել և դէմքն ամբողջովին բացել, ցնցուեց։ «Աննման է, չքնաղ է, մտածեց նա,—արի—սրան ուրիշ դեղ անեմ, չէ՞ որ «լօխմանի հէքիմ» եմ, իրաւունք ունեմ ամեն տեսակ բան անել»։

—Հէքիմ եղբայր, անսպասելի կերպով խօսեց Նոյեմզարը՝ քնքշաձայն,—դու դիտես, դու ես իմ միակ յոյսս, իմ ապաւէնը, մի ճար արա. մեղք եմ, ազատիր ինձ իմ կեսրոջս ատելութիւնից, թէկուզ թոյն տուր, խմեմ, թէկուզ դոլեղի տուր, թէկուզ կարտիր ինձ, աղերսեց Նոյեմզարն և դարձեալ կարմրեց մինչև ականջները, այս անգամ աւելի շատ։

Նրա սրտի կսկիծն ու տանջանքը կեսրոջից ու տնայիններից՝ պատուեցին դեղջկուհուն յատուկ ստրկական չխօսկանութեան և անտեղի ամօթխածութեան քողը, և նա խօսեց տղամարդու առաջ, այն էլ անծանօթ տղամարդի, օտար երկրից եկած։

—Բանս լաւ գնաց, ուրախացաւ հէքիմն իր մտքում։

Առիթը ներկայացաւ նրա վաւաշ մտքերն ի կատար ածելու։ Եւ ահա դիւական ժպտով ասաց։

—Շատ լաւ, հարսիկ, անհոգ եղիր, հենց

առաջին դեղիցս յետոյ կը յղանաս և մի սիրուն երեխայ կ՚ունենաս։

Ապա նա, շփոթուելով ուրախութիւնից, դարձեալ սկսեց անկապ շարժումներ գործել։

—Արի, հոգիս, արի նստիր տախտին, մի՛ ամանչի, հէքիմի մօտ շատ ազատ պէտք է լինել, ասաց նա։

Նոյեմզարը նստեց տախտին։ Նրա սիրտը թրպրտում էր։ Արդեօք ճիշտ լօխմա՞ն է սա, արդեօք ինչ դեղ է անելու, դուցէ սրսկում պիտի անէ մարմնի մէջ և ցաւ պատճառէ, դուցէ պէտք է մերկացնէ, տեսնէ, չօշափէ իր մարմինը։ Չէ՞ որ այդ շատ ամօթ բան է։ Բայց ոչինչ, գէթ նա իրօք բժշկէ իրան։

—Ճա՞ռ են նախատում տնեցիք, հարսիկ, հարցրեց հէքիմը, զրաղեցնելու նպատակով։

—Օ՜, հէքիմ եղբայր, բացականչեց Նոյեմզարը, նայելով շուրջը և ապա դռանը, համոզուելու, որ կեսուրը կամ ուրիշները չեն լսում իր խօսքերը, որ չեն բամբասի նրան, չեն մատնի կեսրոջը, թէ օտարի հետ խօսել է և դանդատուել։

—Գիւղում որդի չունենալը ամենամեծ պատիժն է, մեղադրում են մեզ, որ չենք բերում երեխայ, ախր ես ինչ անեմ, որ Աստուած որդի չէ տալիս։

—Գետեմ այդ բաները, հոգիս, ոչինչ, հիմի ես այնպիսի դեղ կ՚անեմ, որ իսկոյն յղիա-

նաս, վրայ բերեց հէքիմը՝ մօտիկ կանգնելով նրան և կրքոտ հայեացքով դիտելով նրա կարմիր լեռը թշերը։—Տղա՛յ ես ուզում, թէ՞ աղջիկ, հարցրեց նա փոքր ինչ յետոյ։

—Միենոյն է, միայն թէ որդի ունենամ։

«Որսն ընկած է թակարդը, պէտք է բռնել»— վճռեց «լոխմանի հէքիմը։

Նա պտրտեց իր գեղորայքը, դատաւ մի փոքրիկ թղթարկղիկ, որի մէջ կային հապեր, երկու հատ տուեց նրան և հրամայեց կուլ տալ իսկոյն։ Նոյեմզարը վերցրեց հապերը, տախտի միւս ծայրին դրած թասի ջրից մի երկու կում արեց ու կուլ տուեց, մտքում յիշելով զանազան սրբերի անուններ, Աստծուն, Աստուածածնան, և նրանց բոլորին օգնութեան կանչեց։

—Դէ՛, հարսիկ, բարձրացիր տախտին ու պառկիր։

Նոյեմզարը ցնցուեց. անսպասելի էր նրան այդ առաջարկը։ Ի՞նչ կարիք կար պառկելու։ Արդեօք լոխմանը մի խարեբայի մէկը չէ՞, որ ուզում է բռնաբարել իրան. գուցէ քննելու է միայն արդանդը. չէ՞ որ հէքիմ կանայք միշտ մարմինը զննում են. շօշափում։ Ինչ ուզում էր անէ. միայն թէ մի որդի պարգևէ իրան։

Նա այս վճռելով հանդերձ, անշարժ մնաց իր տեղում։

—Դէ՛, շուտով, հարսիկ ջան. ուրիշներին էլ

պէտք է ընդունեմ. բարձրացիր ու մէջքիդ վրայ պառկիր։

Նոյեմզարը անվստահ կերպով բարձրացաւ տախտին, պառկեց մէջքն ի վայր, ծածկելով երեսը ձեռներով, որ իր հայեացքը չ'ընկնէ հէքիմի հայեացքին ու աւելի չ'ամաչէ։

Հէքիմը ուրախութիւնից կորցրեց իրան։ Կիրքն ու տարփանքը բռնկուեցին և նա բարձրանալով տախտին, մօտեցաւ Նոյեմզարին դեղ անելու. . Եւ ահա կատարուեց այն գործողութիւնը, որ կոչւում է առանդումն...

Մի քանի բոպէից յետոյ, երբ հէքիմն իր ջղերին յագուրդ էր տուել, իսկ միամիտ Նոյեմզարը կատարուած իրականութիւնից սթափուելով, լցուել էր յղիանալու յուսով, Հոռոմ խանումը շնորհակալութիւն յայտնելով հէքիմին, Նոյեմզարին առաջը դցած, դիմեց տուն։ Հէքիմը միքանի դեղեր ու մի թղթոսում տուեց Նոյեմզարին, իսկ Հոռոմ խանումին պատուիրեց տարին մի մատաղ անել։

Ընդունելութիւնը շարունակուեց մինչև երեկոյ։ Հին այցելուները նկատեցին, որ այսօր հէքիմը մի ուրիշ անբացատրելի տրամադրութեան տակ էր և աւելի շատ էր փող կորզում։ Նա խօսում էր, շարժւում և գործում մեքենայաբար, չփոթուած։

Բայց հետևեալ օրն առաւօտեան վաղ «լոխ-

մանի հէքիմն» անյայտացել էր... ոչ ոք չ'իմացաւ, թէ ուր։

Նոյեմզարի հետ պատահած դէպքն էլ անյայտ չը մնաց հէքիմի փախչելուց յետոյ. ամբողջ գիւղում խօսում էին այդ մասին....

Միայն միքանի ժամանակից յետոյ լուր եկաւ, որ նոյն «լոխմանի հէքիմը» մի ուրիշ գիւղում բռնաբարել է երիտասարդ դեղեցիկ հարսների ու բռնուել է...

Խաբուած գիւղացիք գլխներին զարկեցին, ասելով.

—Մենք ենք մեղաւոր....

ԲՈՒՖԵՏԻՆՈ 1948
ՏԱՐԵԼԻՔ
10 ՌՈՒԲԼԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Էնցիկլոպեդիա
ՀՍՍՌ-Արա.ՍՍՀ
Ա. Մասիսյան
Ի. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0323896

28609